



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

18.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ՍՑ-ԱՄ-2017/36

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.08.2017թ. թիվ 03/27-1/14263-17 գրությամբ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 18.07.2017թ. թիվ 429 գրության հիման վրա, 04.08.2017թ. թիվ 03/27-1/14263-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն 09.08.2017թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրավերի տեխնիկական բնութագրերը կազմված են եղել կոնկրետ սարքավորման, կոնկրետ մոդելի, ծագման երկրի համար և արտատպված են եղել սարքի կոնկրետ տեխնիկական փապտաթղթերից, որը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին: Նշված բնութագրերը կոնկրետ ցուցանիշներ են եղել և չեն ունեցել թույլատրելի շեղումներ, ինչպիսին ընդունված է համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող մրցույթներում: Ակնհայտ է, որ Պատվիրատուն ցանկություն է ունեցել գնել նախօրոք ընտրված կոնկրետ սարքը: Այս պայմաններում առաջարկել սարք, որը լիովին կկրկնի ընտրված սարքավորման պարամետրերը, գործնականում անհնար է:

Ընկերության կողմից առաջարկված Հ. Կորեական «Սամսունգ-Մեդիսոն» ֆիրմայի սարքը, լինելով պահանջվող սարքի նույն դասի սարքավորում, չէր կարող ունենալ նույն պարամետրերը, սակայն այն ոչնչով չի զիջում պահանջվող սարքին: Միաժամանակ առաջարկվող սարքը մատչելի է մոտ 3 միլիոն ՀՀ դրամով: Առաջարկվող սարքի տեխնիկական ցուցանիշները ունեն պակաս կամ առավել չնչին տարբերություններ, որոնք էական չեն և ընդհանրապես չեն ազդում սարքի ֆունկցիոնալ հնարավորությունների վրա: Օրինակ՝ սկանավորման որակի, մանր դետալների բարձր վիզուալիզացիայի համար տվիչի ամենակարևոր ցուցանիշներն են՝ տվիչի հաճախականության դիապազոնը և էլեմենտների քանակը: Պահանջված գծային 5.5-14ՄՀց փոխարեն առաջարկվող գծային տվիչի հաճախականությունն է 3-16ՄՀց, իսկ պահանջված Կոնվեքս 1.2-6ՄՀց, 140 էլեմենտով տվիչի փոխարեն առաջարկվող Կոնվեքս տվիչի հաճախականությունն է 2-

8ՄՀց, 192 էլեմենտ: Ակնհայտ է, որ առաջարկված տվիչները գերազանցում են պահանջվածներին:

Պահանջված տվիչի դիտարկման անկյունը 70 է, իսկ շառավիղը 52 մմ, իսկ առաջարկված տվիչի դիտարկման անկյունը 58 է, շառավիղը 60 մմ:

Պահանջված 19 դյույմ անկյունագծով հեղուկ-բյուրեղային էլկրանի LCD և 8.4 դյույմ անկյունագծով՝ TFT մոնիտորի փոխարեն առաջարկվել է 21.5 անկյունագծով հեղուկ-բյուրեղային էկրան և պահանջված PRF անընդհատ-ալիքային դոպլերի համար՝ պահանջված 1400-49700 Հց փոխարեն «Սամսունգ» ֆիրմայի առաջարկվող սարքի անընդհատ-ալիքային դոպլերի համար PRF՝ 1800-57000 Հց, որն ավելի բարձր ցուցանիշ է: Արագությունը՝ 1.8-142: PRF գունավոր դոպլերի համար՝ 0.1-19.5 կՀց: M-ռեժիմի արագությունը՝ 15-117 մմ/վ: B-ռեժիմի կադրերի հաճախականությունը՝ 2000 կ/վ, պահանջված 500-ի փոխարեն: PRF իմպուլս-ալիքային դոպլերի համար՝ 1.0-22.5 կՀց: Առաջարկվող սարքի սկանավորման խորությունը 38 սմ է, որը նույնպես բարձր ցուցանիշ է և թույլ է տալիս գերազանց կատարել գեր մարդկանց սկանավորումը:

Ինչ վերաբերում է պահանջված մազանոթների հունի պատկերավորման ռեժիմին, Ընկերությունը հայտնել է, որ բացի անընդհատ-ալիքային, իմպուլս-ալիքային և գունավոր դոպլերների, սարքն ունի բարձր զգայությամբ էներգետիկ դոպլեր, որն օգտագործվում է ցածր արագության անոթների, մազանոթների և նեռանոթների գույնը կոդավորելու համար: Նաև սարքը համալրված է «S-flow» ծրագրով, որը թույլ է տալիս տեսնելու անոթների հոսքերի ուղղորդվածության տեղեկությունները:

Նշված տեխնիկական բնութագրերը վերցված են «Սամսունգ-Մեդիսոն» ֆիրմայի տեխնիկական փաստաթղթերից և լիովին համապատասխանում են իրականությանը, որի համար Ընկերությունը պատրաստ է կրել պատասխանատվություն:

Նշված գրությամբ Ընկերությունը հայտնել է նաև, որ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՀ ՍՊԸ-ն ավելի քան 10 տարի հանդիսանում է «Սամսունգ-Մեդիսոն» ֆիրմայի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: «Սամսունգ-Մեդիսոն» ֆիրմայի արտադրության սարքավորումները շահագործվում են ՀՀ-ի բազմաթիվ բժշկական կազմակերպություններում:

«Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն որևէ խախտում չի կատարել Ընթացակարգին մասնակցելու առումով, ընդհակառակը, ցանկացել է մրցակցություն ստեղծել, և Ընկերության համար անհասկանալի է ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից այլընտրանքային առաջարկ ներկայացնողին պատժելու ցանկությունը:

Խորհրդին ուղղված 11.08.2017թ. գրությամբ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է 21.04.2017թ.: Տեղյակ լինելով, որ ՀՀ գնումների մասին նոր օրենքն ուժի մեջ է մտել 25.04.2017թ., Ընկերության կողմից Ընթացակարգին հայտ է ներկայացվել 02.05.2017թ.՝ համոզված լինելով, որ ըստ ուժի մեջ մտած նոր օրենքի, առաջարկված տեխնիկական բնութագրերի չնչին և ոչ էական տարբերությունները չեն հանդիսանում պատճառ հետագա պատժամիջոցների:

Այսինքն, Ընկերության կողմից միտումնավոր ոչ մի խախտում չի եղել:

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 03.05.2017թ., երբ ՀՀ գնումների մասին նոր օրենքն արդեն ուժի մեջ էր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր 20 տարվա գործունեության ընթացքում «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն որևիցե խախտում չի կատարել, եղել է պարտաճանաչ հարկատու, բուժհաստատությունների հուսալի գործընկեր և մրցույթներից առաջացած հասույթը Ընկերության հիմնական աղբյուրն է, Ընկերությունը Խորհրդին խնդրել է «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

* Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 11.08.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի նախարարության կողմից ներկայացված փաստաթղթերը և դիրքորոշումը.

ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.07.2017թ. թիվ 429 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2017թ. հայտերի գնահատման նիստի թիվ 14 որոշմամբ՝ 2-րդ չափաբաժնի մասով գնահատվել է անբավարար և մերժվել՝ տեխնիկական բնութագիրը չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 11.08.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2017/36 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/36 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որի հրավերը և հայտարարությունը հրապարակվել է 20.04.2017թ.:

2. Ընթացակարգի հրավերով սահմանվել է 2-րդ չափաբաժնի համար հետևյալ տեխնիկական բնութագիրը.

2	Թվային ուլտրաձայնանիս համակարգ երկու տվիչով	հատ	Թվային ուլտրաձայնանիս համակարգ, ճառագայթի թվային ձևավորիչ ոչ պակաս, քան 12 բիթ, Փոխանցման ֆիզիկական ալիքների քանակը ոչ պակաս, քան 128, Փոխանցման (Հաղորդման) ընդունման թվային վերամշակվող ալիքների քանակը ոչ պակաս, քան 65000, Դինամիկ դիապազոն առնվազն 200 Դբ, Ֆոկուսների քանակը փոխանցման ժամանակ ոչ պակաս, քան 8, Սկանավորման
---	---	-----	---

		խորություն ոչ պակաս, քան 40 սմ, Պատկերի մեծացում՝ մասշտաբի իրական ժամանակում ոչ պակաս, քան 25 անգամ, "Սառեցված" պատկերի մեծացում ոչ պակաս, քան 25 անգամ, Լայնաշերտ և մուլտիհաճախականության սկանավորում, Էխո-ազդանշանների զուգահեռ մշակում, Էխո-ազդանշանների քառալիքանի մշակում, պատկերների սեզմենտար մեծացում, TFT մոնիտոր խոշոր անկյունագծով ոչ պակաս, քան 19 դյույմ, պիքսելները ոչ պակաս, քան 1280x1024, Մոնիտորի անկյան առնվազն 170 աստիճան, մոնիտորի մատրիցայի արձագանքման ժամանակը ոչ ավել, քան 18 մվ, կոնտրաստը առնվազն 800:1, մոնիտորի լուսավորության մակարդակը առնվազն 180 կր/մ2, Մոնիտորի անկյան թեքության կարգավորում ոչ պակաս, քան՝ դեպի առաջ 40 աստիճան, դեպի ետ 5 աստիճան, շրջման կարգավորում առնվազն 120 աստիճան, Հեղուկ-բյուրեղային էկրան /LCD/ անկյունագծով ոչ պակաս, քան 8,4 դյույմ, կառավարման վահանակի կարգավորում ըստ բարձրության – ոչ պակաս քան 23 սմ, շրջապտույտի կարգավորում առնվազն +/-30 աստիճան Սարքավորման չափերը Բարձրություն՝ 1350-1700 մմ, Լայնություն՝ 400-500 մմ, Քաշ՝ 60-80 կգ. B-նեժիմ- Կեղծ գունավորման քարտեր առնվազն 12, Կադրերի հաճախականությունը/վ ոչ պակաս, քան 500, M-նեժիմ. Կեղծ գունավորման քարտեր առնվազն 12, B- և M- նեժիմների համակցում, B- և M- նեժիմների և գունավոր դոպլերի համակցում, Արագությունը առնվազն 1,733-13,87վ (8 քայլ) Իմպուլս-ալիքային դոպլեր, PRF-իմպուլս-ալիքային դոպլերի համար ոչ պակաս, քան 300 – 49700 Հց. , Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը առնվազն 35 սմ/վրկ. Հայտնաբերվող մինիմալ արագությունը ոչ ավել, քան 0,05 սմ/վրկ. Դոպլեր ֆիլտրերի դիապազոնը 2 – 13021 Հց, Անկյան կորեկցիա, դիապազոն առնվազն +/-79 աստիճան, Անկյան կորեկցիա, քայլ - առնվազն 12, Վերահսկողության ծավալի դիապազոն 1 – 20, Վերահսկողության ծավալի դիապազոնի փոփոխության քայլը 1,5 մմ, Կեղծ գունավորման քարտեր առնվազն 12, Դոպլեր սպեկտրի ավտոմատ ուրվագծում, B- և PW-նեժիմների համակցում ռեալ ժամանակում, Անընդհատ-ալիքային դոպլեր. PRF անընդհատ-ալիքային դոպլերի համար ոչ պակաս, քան 1400 – 49700 Հց, Հայտնաբերվող մաքսիմալ արագությունը առնվազն 42 մ/վրկ, Հայտնաբերվող մինիմալ արագությունը ոչ ավել քան 3,5 սմ/վրկ, Դոպլեր ֆիլտրերի դիապազոնը առնվազն 160 – 13000 Հց, Դոպլեր սպեկտրի /միջակայքի/ ավտոմատ եզրագծում, Կեղծ գունավորման քարտեր առնվազն 12 Գունավոր դոպլեր. PRF Գունավոր դոպլերի համար դոպլեր սպեկտրի ավտոմատ ուրվագծում առնվազն 500 – 27000 Հց, Մաքսիմալ արագություն ոչ պակաս, քան 380 սմ/վրկ. Մինիմալ արագություն ոչ ավել քան 0,5 սմ/վրկ., Գունավոր դոպլեր ռեժիմում կադրերի հաճախականությունը/վրկ առնվազն 380, B- և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում, B-, M - և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում, B-, PW - և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում, B-, CW - և գունավոր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում, Սկանավորման անկյան փոփոխության դիապազոնը /տիրույթ/ Գծային հաղորդիչների համար առնվազն +/- 30 աստիճան, գունավորման քարտեր ոչ պակաս, քան 12; Էներգետիկ դոպլեր. PRF Էներգետիկ դոպլերի համար առնվազն 500 – 24000 Հց, Գունային քարտերի քանակը Էներգետիկ դոպլերի համար ոչ պակաս, քան 12, Էներգետիկ դոպլեր ռեժիմում կադրեր/վրկ հաճախականությունը առնվազն 380, B- և Էներգետիկ դոպլեր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում, B-, PW- և Էներգետիկ դոպլեր ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում; Հյուսվածքային դոպլեր. PRF հյուսվածքային դոպլերի համար առնվազն 2100 – 13500 Հց, Կադր /վրկ հաճախականությունը հյուսվածքային դոպլեր ռեժիմում ոչ պակաս, քան 1000, B-, PW - և հյուսվածքային դոպլերի ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում; Հյուսվածքային հարմոնիկա, Հյուսվածքային հարմոնիկ ռեժիմը իմպուլսի
--	--	---

		սուբտրակցիայով, ֆիլտրացիոն հյուսվածքային հարմոնիկայի ռեժիմ; Բարդ բազմաալիքային պատկերավորումը իրական ժամանակում, Բարդ բազմաալիքային պատկերավորումը B-և գունավոր դոպլեր ռեժիմների համակցումով, Բարդ բազմաալիքային պատկերավորումը B-ռեժիմում կատարելագործված դինամիկ հոսքի ռեժիմի համակցումով; Անոթների հունի պատկերավորման ռեժիմը բարձր տարածական/ժամանակային հնարավորությամբ – կատարելագործված դինամիկ հոսք, Անոթների հունի պատկերավորման ռեժիմում գունավորման քարտերի քանակը առնվազն 12, Անոթների հունի պատկերավորման բարձր տարածական/ժամանակային լուծման ռեժիմի օգտագործումը բոլոր կոնվեքսային և գծային հաղորդիչներով, B-, PW- և Անոթների հունի պատկերավորման բարձր տարածական/ժամանակային լուծման ռեժիմների համակցված պատկերավորումը իրական ժամանակում; Տարածական և հաճախականության կողավորման ռեժիմ իրական մասշտաբային ժամանակում, որը համակցվում է աղմուկի նվազման մեթոդով-նման ՄՌՏ պատկերին, B- ռեժիմում տարածական և հաճախականության կողավորման իրական մասշտաբային ժամանակում համակցված աղմուկի նվազման մեթոդով - նման ՄՌՏ պատկերին, B- ռեժիմում տարածական և հաճախականության կողավորում իրական մասշտաբային ժամանակում աղմուկի նվազման մեթոդով՝ համակցված գունավոր դոպլեր ռեժիմով, B- ռեժիմում տարածական և հաճախականության կողավորում իրական մասշտաբային ժամանակում աղմուկի նվազման մեթոդով՝ համակցված կատարելագործված դինամիկ հոսքի ռեժիմով; Ճշգրիտ պատկերավորում - բազմաթիվ կից ուլտրաձայնային գծերի միաժամանակյա մշակում իրական ժամանակում արտացոլված էխոագրանշանի ուժեղացման և աղմուկի իջեցման համար, Ճշգրիտ պատկերում B-ռեժիմում համակցված արյան հոսքի գունավոր դոպլեր ռեժիմի հետ, Ճշգրիտ պատկերում B-ռեժիմում համակցված հյուսվածքային հարմոնիկ ռեժիմի հետ, Ճշգրիտ պատկերում B-ռեժիմում համակցված կատարելագործված դինամիկ հոսքի ռեժիմի հետ; B -ռեժիմում պատկերների ավտոօպտիմիզացիա՝ ըստ հյուսվածքների ակուստիկ հատկությունների, դոպլեր հոսքերի ավտոօպտիմիզացիա, "Թարմ" տվյալների պահպանում հետագա վերամշակումով ներքին կամ արտաքին աշխատանքային միջավայրերում, intima-media-ի ավտոմատ եզրագծում և չափում; Չափումներ, հաշվարկներ և ծրագրային ապահովում հետազոտությունների համար - Սրտաբանական, Անոթային, Ուրոլոգիական, Նորածինների իծնե ազդրի հոդախախտի հայտնաբերման; Տվիչների ակտիվ պորտերի քանակ, ոչ պակաս քան 3 հատ, Ինտեգրված աշխատանքային կայան, Կոշտ սկավառակի ծավալը առնվազն 500 GB, կինոհանգույց առնվազն 2700 կադր (256Մբ 30վրկ); Ստատիկ պատկերների արխիվացիա կոշտ սկավառակի վրա jpeg, bmp, DICOM ֆորմատով; Ստատիկ պատկերների արխիվացիա DVD/CD-RW սկավառակի վրա jpeg, bmp, DICOM ֆորմատով; Դինամիկ պատկերների արխիվացիա կոշտ սկավառակի վրա MPEG, CinePack/WMV7/WMV9, DICOM ֆորմատով Դինամիկ պատկերների արխիվացիա DVD/CD-RW սկավառակի վրա MPEG, CinePack/WMV7/WMV9, DICOM ֆորմատով Ուղիղ ձայնագրում USB Flash Drive վրա jpeg, bmp, MPEG, CinePack/WMV7/WMV9, DICOM ֆորմատով Սարքը պետք է ունենա հետևյալ օպցիաները, որոնք հնարավոր է ձեռք բերել լրացուցիչ՝ Եռաչափ էխոգրաֆիա իրական ժամանակում՝ հատուկ 4D հաղորդիչների օգտագործմամբ, Եռաչափ էխոգրաֆիայի արագությունը իրական ժամանակում առնվազն 12 սմ կադր/վրկ ծավալում, մուլտիպլանար վերակառուցման ռեժիմ /3պլոյնեցիայով/՝ շերտի հաստության ընտրովի դիապազոնով, մուլտիպլանար
--	--	--

		վերակառուցման ռեժիմ /3պրոյեկցիայով/՝ շերտի հաստության ընտրովի դիապազոնով առնվազն 0,2 - 10 սմ, Մուլտիպլանար վերակառուցման ռեժիմ /3պրոյեկցիայով/՝ էկրանին միաժամանակյա ցուցադրումով առնվազն 16 կտրվածք, Մուլտիպլանար վերակառուցման ռեժիմ համակցված արյան հոսքի գունավոր սկանավորմամբ, Մուլտիպլանար վերակառուցման ռեժիմ համակցված կատարելագործված դինամիկ հոսքի ռեժիմով, էլեկտրոնային սկալպելի ռեժիմ, Հյուսվածքային կառուցվածքների ծավալի ավտոմատ հաշվարկի ծրագիր եռաչափ էխոգրաֆիայի ռեժիմում իրական ժամանակում (4D), MPR մուլտիպլանար վերակառուցման ռեժիմ, MaxIP առավելագույն ինտենսիվության ռեժիմ, MiniP նվազագույն ինտենսիվության ռեժիմ, Cavity ինվերսիայի ռեժիմ, Մեկնաբանությունների մոտքագրման ֆունկցիա, էլեկտրոնային սկալպելի ռեժիմ, Ստացված 4D արդյունքների փոխանցում արտաքին աշխատանքային համակարգ DICOM ֆորմատով հետագա վերնաշկաման հնարավորությամբ, եռաչափ էխոգրաֆիա իրական ժամանակում՝ կոնտրաստային նյութերի կիրառումով, Կոմպրեսսիոն էլաստոգրաֆիա - հյուսվածքների պնդության/էլաստիկության որակական և քանակական անալիզ՝ իրական ժամանակում մոնիտորի էկրանին կոէֆիցիենտի/գործակցի/ ցուցադրում, Գունային քարտերի քանակը ոչ պակաս քան 6, Հետաքրքրական գոտու առանձնացում ձեռքով և ստանդարտ երկրաչափական պատկերների միջոցով, Մոնիտորի էկրանին B- և էլաստոգրաֆիկ ռեժիմներում պատկերների միաժամանակյա ցուցադրում; Վիրտուալ լուսավորման ապահովում; Համայնապատկերային սկանավորում, առնվազն 225 սմ պատկերի հնարավորությամբ Վասկուլյարիզացիայի ինդեկս էներգետիկական դոպլերի համար; Հյուսվածքային ուժեղացում՝ կադրերի բարձր հաճախականությամբ; Ֆիզիոլոգիական ինֆորմացիայի պատկերում ՖՍԳ , Հատուկ ֆիլտրացիոն տեխնոլոգիա կրծքագեղձի միկրոկալցինատների հայտնաբերման համար; Կոնտրաստային էխոգրաֆիա; Տարբերակված հյուսվածքային հարմոնիկայի ռեժիմ, Մազանոթների հունի պատկերավորման ռեժիմը բարձր տարածական/ժամանակային լուծմամբ և կադրերի բարձր հաճախականությամբ: Մազանոթների հունի պոլիխորում ներկում: Լրակազմը՝ Կոնվեքսային տվիչ, էլեմենտների քանակ ոչ պակաս քան 140, հաճախականությունների դիապազոն առնվազն 1,2-6,0 ՄՀց, դիտարկման անկյունը առնվազն 70, շառավիղ ոչ ավել քան 52 մմ, հյուսվածքային հարմոնիկայի իմպուլսի սուբստրակցիայով, դիֆերենցված հյուսվածքային հարմոնիկա, Իմպուլս-ալիքային դոպլեր, Գունավոր դոպլեր, էներգետիկ դոպլեր, բարելավված դինամիկ հոսք, մազանոթային հունի պատկերավորում բարձր տարածական/ժամանակային հնարավորությամբ, բազմաալիքային բարդ սկանավորում իրական ժամանակում, տարածական և հաճախականության կողավորում իրական ժամանակում խզումների ճնշման մեթոդիկայի հետ համատեղ, ճշգրիտ պատկերավորում, 2D պատկերի օպտիմալացում ըստ հյուսվածքների ակուստիկ հատկությունների, դոպլերյան սպեկտրի օպտիմալացում, պանորամային սկանավորում, կոմպրեսիոն էլաստոգրաֆիա, կոնտրաստային էխոգրաֆիա, Գծային տվիչ, էլեմենտների քանակ ոչ պակաս քան 192, հաճախականությունների դիապազոն առնվազն 5,5-14,0 ՄՀց, բացվածք ոչ ավել քան 60մմ, պոնկցիոն ասեղի ցուցադրման ավտոմատ բարելավում, անկյան անկախ փոփոխություն B ռեժիմում, գունավոր և սպեկտրալ դոպլերյան ռեժիմներում, հյուսվածքային հարմոնիկայի իմպուլսի սուբստրակցիայով, դիֆերենցված հյուսվածքային հարմոնիկա, Իմպուլս-ալիքային դոպլեր, Գունավոր դոպլեր, էներգետիկ դոպլեր, բարելավված դինամիկ հոսք, մազանոթային հունի պատկերավորում բարձր տարածական/ժամանակային
--	--	---

		հնարավորությամբ, տրապեզոիդանման սկանավորում, բազմաալիքային բարդ սկանավորում իրական ժամանակում, տարածական և հաճախականության կողավորում իրական ժամանակում խզումների ճնշման մեթոդիկայի հետ համատեղ, ճշգրիտ պատկերավորում, 2D պատկերի օպտիմալացում ըստ հյուսվածքների ակուստիկ հատկությունների, դոպլերյան սպեկտրի օպտիմալացում, պանորամային սկանավորում, MicroPure, կոմպրեսիոն էլաստոգրաֆիա, լայնական ալիքի էլաստոգրաֆիա, պատկերի եռաչափ ռեկոնստրուկցիա, կոնտրաստային էխոգրաֆիա Տպիչի ամրացման բռնակ Տպիչ սև սպիտակ 1 տարվա երաշխիք
--	--	---

3. ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՇՀԱՊԶԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն 03.05.2017թ. հայտ է ներկայացրել:

4. Ընկերությունը հայտի թիվ 4.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ «ՇՀԱՊԶԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 2, 3 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն պարտավորվում է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված կարգով ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 13 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել են «Յունիմեդ» հայ-

ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում տեղ գտած հետևյալ անհամապատասխանությունները.

- Պահանջվող PRF հյուսվածքային դոպլերի համար առնվազն 2100-13500 Հց կադր/վրկ հաճախականությունը հյուսվածքային դոպլեր ռեժիմում ոչ պակաս, քան 1000՝ ներկայացված չէ.

- Պահանջվող PRF անընդհատ-ալիքային դոպլերի համար ոչ պակաս, քան 1400-49700 Հց, հայտնաբերվող մաքսիմալ արագությունն առնվազն 42 մ/վրկ., հայտնաբերվող մինիմալ արագությունը ոչ ավել, քան 3.5 սմ/վրկ՝ ներկայացված չէ.

- Պահանջվող PRF գունավոր դոպլերի համար դոպլեր սպեկտրի ավտոմատ ուրվագծում առնվազն 500-27000 Հց, մաքսիմալ արագությունը ոչ պակաս, քան 380 սմ/վրկ., մինիմալ արագություն ոչ ավել քան 0.5 սմ/վրկ՝ ներկայացված չէ.

- M-ռեժիմում արագությունն առնվազն 1.733-13.87 վ (8 քայլ)՝ ներկայացված չէ.

- B-ռեժիմում կադրերի հաճախականությունը /վ/ ոչ պակաս, քան 500՝ ներկայացված չէ.

- Պահանջվող PRF-իմպուլս-ալիքային դոպլերի համար ոչ պակաս, քան 300-49700 Հց, հայտնաբերվող մաքսիմալ արագությունն առնվազն 35 սմ/վրկ., հայտնաբերվող մինիմալ արագությունը ոչ ավել, քան 0.05 սմ/վրկ., ներկայացված չէ.

- Դիտարկման անկյունն առնվազն 70, շառավիղ ոչ ավել, քան 52 մմ՝ ներկայացված չէ.

- Չունի պահանջ մազանոթների հունի պատկերավորման ռեժիմի լրացման՝ բարձր տարածական/ժամանակային լուծմամբ և կադրերի բարձր հաճախականությամբ: Մազանոթների հունի պոլիխրոմ ներկում.

- Հրավերով պահանջվող սկանավորման խորություն ոչ պակաս, քան 40 սմ, իսկ ներկայացվածը՝ 38 սմ է.

- Հրավերով պահանջվող պատկերի մեծացում՝ մասշտաբի իրական ժամանակում ոչ պակաս, քան 25 անգամ, «Սառեցված» պատկերի մեծացում ոչ պակաս, քան 25 անգամ, իսկ ներկայացվածը՝ պատկերի մեծացում՝ 100-800%:

7. Վերոհիշյալ արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 14 արձանագրության 1.2-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.08.2017թ. թիվ 03/27-1/14263-17 գրությունը, ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 18.07.2017թ. թիվ 429 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4...»

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին եմբակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն 03.05.2017թ. հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը սահմանված կարգով ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

2	Թվային ուլտրաձայնային համակարգ երկու տվիչով "HS40" SAMSUNG MEDISON	Հատ Թվային ուլտրաձայնային համակարգ, տվիչների ակտիվ պորտերի քանակ՝ 3 հատ, Սարքավորման չափերը՝ բարձրություն՝ 1354-1620 մմ, լայնություն՝ 520 մմ, քաշ՝ 57 կգ. Մոնիտոր՝ 21.5 դյույմ անկյունագծով, պիքսելները՝ 1920x1080, Մոնիտորի շրջման կարգավորում՝ +/- 160°, թեքության կարգավորում՝ +25°/-70°, բարձրության կարգավորում՝ 180 մմ, Touch Screen էկրան 10.1 դյույմ անկյունագծով, 1280x800 պիքս., փոխանցման (հաղորդման) ընդունման թվային վերամշակվող ալիքների քանակը՝ 573.440, դինամիկ դիապազոն՝ 256, ֆոկուսների քանակը փոխանցման ժամանակ՝ 1-8, սկանավորման խորություն՝ 38սմ, պատկերի մեծացում՝ 100-800%, լայնաշերտ և մուլտիհաճախականության սկանավորում, էխո-ազդանշանների զուգահեռ մշակում Dual Mode, էխո-ազդանշանների քառալիքանի մշակում Quad Mode, պատկերների սեզմենտար մեծացում, պատկերի հակապատկերում՝ աջ/ձախ, վերև/ներքև, պատկերի պտույտ՝ 90°, 180°, 270°, Կոշտ սկավառակի ծավալը՝ 500 GB, Կինոհանգույց՝ 14.000, պատկերի պահպանում՝ 350.000 ստատիկ պատկեր, 45.000 դինամիկ պատկեր Ռեժիմներ՝ B, M, գունավոր դոպլեր /Color Doppler Mode/, իմպուլս-ալիքային դոպլեր /Pulse Wave Doppler PWD/, անընդհատ-ալիքային դոպլեր /continuous Wave Doppler CWD/, Steered/Satic, Dual/Quard Mode, Zoom Mode/ էներգետիկ դոպլեր /Power Doppler PD/, հյուսվածքային դոպլեր /Power Doppler Imaging TDI/, հյուսվածքային հարմոնիկա /Tissue Doppler Wave TDW/, Duplex, Triplex Համակցված ռեժիմներ՝
---	---	---

			Dual Mode: B+B, B+B/C, B+B/PD, B+B/S-Flow, Dual Live Mode: B+B, B+B/C, B+B/PD, B+B/S-Flow, B+ElastoScan, Real-Time, Triplex Mode (Simultaneous Mode): B+C+PW, B+PD+PW, B+S+Flow+PW, B+TDI+TDW, Duplex, Triplex Mode, B+C, B+M, B+3D, B+4D, B+PW, B+PD, B+S-Flow, B+CW, B+C+PW, B+C+CW, B+C+M, B+ElastoScan, B+TDI, B+TDW, Quad Mode: Combinations of B/B, B/C, B/PD and B/S-Flow, Zoom Mode: Write Zoom/ Read Zoom/ Pen Zoom/ Panning/ Trapezoid Օգտագործման բնագավառ/ չափումներ, հաշվարկներ՝ Caliper/ հիմնական չափումներ Abdomen/ որովային Cardiac/ սիրտ Vascular/ անոթներ Urology/ ուրոլոգիա Thyroid/ վահանազեղծ Carotid/ քներակ Artery/ շնչերակ Vein/ երակ Gynecology/ գինեկոլոգիա Fetal Heart/ պտղի սիրտ MSK/ ոսկրային հետազոտումներ Obstetrics/ մանկաբարձություն Pediatric Hip angle/ Угол тазобедренного сустава/ մանկական Small Parts/ մանր օրգաններ ստատիկ պատկերների արխիվացիա կոշտ սկավառակի վրա JPEG, BMP, DICOM ֆորմատով, ստատիկ պատկերների արխիվացիա DVD/CD-RW սկավառակի վրա, AVI, MPEG, JPEG, BMP, TIFF, DICOM ֆորմատով, դինամիկ պատկերների արխիվացիա կոշտ սկավառակի վրա MPEG, Cinepack/WMV7/WMV9, DICOM ֆորմատով, դինամիկ պատկերների արխիվացիա DVD/SD-RW սկավառակի վրա MPEG, Cinepack/WMV7/WMV9, DICOM ֆորմատով ծայնագրում USB Flash Drive վրա jpeg, bmp, MPEG, GinePack/WMV7/WMV9, DICOM ֆորմատով, ծայնագրում USB Flash Drive վրա jpeg, bmp, MPEG, GinePack/WMV7/WMV9, DICOM ֆորմատով, Սարքն ունի հետևյալ օպցիաները, որոնք հնարավոր է ձեռք բերել լրացուցիչ՝ 5D NT, 5D Follicle, 4D, 3D XI™, Freehand 3D, Auto IMT+, XI STIC, ElastoScan, EZ Exam+, Hello Mom, Needle Mate+, ECG, Gel Warmer, RealisticVue, DICOM 3.0, MultiVision, Pangramic, Strain+, SEE Stream իրենց ծրագրային ապահովումով, տեխնոլոգիաներով և չափումներով Լրակազմը՝ Կոնվեքսային տվիչ՝ 2.0-8.0 ՄՀգ, էլեմենտների քանակ՝ 192 Գծային տվիչ՝ 3.0-16.0 ՄՀգ, էլեմենտների քանակ՝ 192 Տպիչի ամրացման բռնակ Տպիչ սև սպիտակ 1 տարվա երաշխիք
--	--	--	---

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 13 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել են «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում տեղ գտած հետևյալ անհամապատասխանությունները.

- Պահանջվող PRF հյուսվածքային դոպլերի համար առնվազն 2100-13500 Հց կադր/վրկ հաճախականությունը հյուսվածքային դոպլեր ռեժիմում ոչ պակաս, քան 1000՝ ներկայացված չէ.

- Պահանջվող PRF անընդհատ-ալիքային դոպլերի համար ոչ պակաս, քան 1400-49700 Հց, հայտնաբերվող մաքսիմալ արագությունն առնվազն 42 մ/վրկ., հայտնաբերվող մինիմալ արագությունը ոչ ավել, քան 3.5 սմ/վրկ՝ ներկայացված չէ.

- Պահանջվող PRF գունավոր դոպլերի համար դոպլեր սպեկտրի ավտոմատ ուրվագծում առնվազն 500-27000 Հց, մաքսիմալ արագությունը ոչ պակաս, քան 380 սմ/վրկ., մինիմալ արագություն ոչ ավել քան 0.5 սմ/վրկ՝ ներկայացված չէ.

- M-ռեժիմում արագությունն առնվազն 1.733-13.87 վ (8 քայլ)՝ ներկայացված չէ.

- B-ռեժիմում կադրերի հաճախականությունը /վ/ ոչ պակաս, քան 500՝ ներկայացված չէ.

- Պահանջվող PRF-իմպուլս-ալիքային դոպլերի համար ոչ պակաս, քան 300-49700 Հց, հայտնաբերվող մաքսիմալ արագությունն առնվազն 35 սմ/վրկ., հայտնաբերվող մինիմալ արագությունը ոչ ավել, քան 0.05 սմ/վրկ., ներկայացված չէ.

- Դիտարկման անկյունն առնվազն 70, շառավիղ ոչ ավել, քան 52 մմ՝ ներկայացված չէ.

- Չունի պահանջ մազանոթների հունի պատկերավորման ռեժիմի լրացման՝ բարձր տարածական/ժամանակային լուծմամբ և կադրերի բարձր հաճախականությամբ: Մազանոթների հունի պոլիխրոմ ներկում.

- Հրավերով պահանջվող սկանավորման խորություն ոչ պակաս, քան 40 սմ, իսկ ներկայացվածը՝ 38 սմ է.

- Հրավերով պահանջվող պատկերի մեծացում՝ մասշտաբի իրական ժամանակում ոչ պակաս, քան 25 անգամ, «Սառեցված» պատկերի մեծացում ոչ պակաս, քան 25 անգամ, իսկ ներկայացվածը՝ պատկերի մեծացում՝ 100-800%:

Վերոհիշյալ արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Յունիմեդ» հայ-ռուսական ՀԶՍՈՒ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընկերությունը գնահատող Ընթացակարգի հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված սարքը տեխնիկական ցուցանիշներում ունի չնչին տարբերություններ՝ պակաս կամ առավել, սակայն դրանք ոչ էական են և ընդհանրապես չեն ազդում սարքի ֆունկցիոնալ լինելու վրա: Օրինակ, պահանջված PRF անընդհատ-ալիքային դոպլերի համար, պահանջված 1400-49700 Հց փոխարեն «Սամսունգ» ֆիրմայի առաջարկվող սարքի անընդհատ-ալիքային դոպլերի համար PRF՝ 1,8-57 կՀց, որն ավելի բարձր ցուցանիշ է: Արագությունը՝ 1.8-142: PRF գունավոր դոպլերի համար՝ 0.1-19.5 կՀց: M-ռեժիմի արագությունը՝ 15-117 մմ/վ: B-ռեժիմի կադրերի հաճախականությունը՝ 2000 կ/վ, պահանջված 500-ի փոխարեն: PRF իմպուլս-ալիքային դոպլերի համար՝ 1.0-22.5 կՀց: Առաջարկվող սարքի սկանավորման խորությունը 38 սմ, որը նույնպես բարձր ցուցանիշ է և թույլ է տալիս գերազանց կատարել գեր մարդկանց սկանավորումը:

Ինչ վերաբերում է պահանջված մազանոթների հունի պատկերավորման ռեժիմին, Ընկերությունը հայտնել է, որ բացի անընդհատ-ալիքային, իմպուլս-ալիքային և գունավոր դոպլերների, սարքն ունի բարձր զգայունությամբ էներգետիկ դոպլեր, որն օգտագործվում է ցածր արագության անոթների, մազանոթների և նեոանոթների գույնը կողավորելու համար: Սարքը նաև համալրված է “S-flow” ծրագրով, որը թույլ է տալիս տեսնելու անոթների հոսքերի ուղղորդվածության տեղեկությունները:

Կան նաև ցուցանիշների տարբերություններ պահանջված 19 դյույմ անկյունագծով հեղուկ-բյուրեղային էկրանի /LCD/ և 8.4 դյույմ անկյունագծով TFT մոնիտորի և առաջարկվող 21.5 դյույմ անկյունագծով հեղուկ-բյուրեղային էկրանի և 10.1 դյույմ անկյունագծով Touch Screen էկրանների մեջ, ուստի առաջարկվածն ավելի բարձր ցուցանիշ ունի, քան պահանջվածը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ տվիչի դիտարկման անկյունը 58 է, շառավիղը՝ 60 մմ: Սակայն սկանավորման որակի, մանր դետալների բարձր վիզուալիզացիայի համար տվիչի ամենակարևոր ցուցանիշներն են տվիչի հաճախականության դիապազոնը և

էլեմենտների քանակը: Պահանջված գծային 5.5-14 ՄՀg փոխարեն առաջարկվող գծային տվիչի հաճախականությունն է 3-16 ՄՀg, իսկ պահանջված կոնվեքս 1.2-6 ՄՀg, 140 էլեմենտով տվիչի փոխարեն առաջարկվող կոնվեքս տվիչի հաճախականությունն է 2-8 ՄՀg, 192 էլեմենտ: Ընկերությունը հայտնել է, որ առաջարկված տվիչները գերազանցում են պահանջվածներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.07.2017թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 14 արձանագրության 1.2-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է հետևյալ հիմնավորմամբ՝

ա) պահանջվող սկանավորման խորություն **ոչ պակաս, քան 40սմ**: Մասնակցի ներկայացրած բնութագրում **38 սմ է**: Պահանջի հիմնավորում՝ խորանիստ շերտեր ներթափանցման առավելության շնորհիվ մասնագետը կունենա հնարավորություն սկանավորելու բարդ կոնստիտուցիոնալ կառուցվածքով կամ գեր մարդկանց՝ առանց սկանավորման պատկերի շոշափելի կորստի, հակառակ դեպքում պատկերը էականորեն կտուժի խորանիստ հատվածում.

բ) պահանջվող պատկերի մեծացում՝ մասշտաբի իրական ժամանակում **ոչ պակաս, քան 25 անգամ**, «Սառեցված» պատկերի մեծացում **ոչ պակաս, քան 25 անգամ**: Մասնակցի ներկայացրած բնութագրում 100-800%, այսինքն ընդամենը **8 անգամ**: Պահանջի հիմնավորում՝ պատկերի հնարավոր մաքսիմալ մեծացումը հնարավորություն է տալիս գնահատել փոքր դետալները և հստակ տարանջատել հարևան հյուսվածքների եզրերը միմյանցից: Մեծացման ցածր ցուցանիշը էական դժվարություններ կառաջացնի մասնագետի մոտ դետալների զննման ժամանակ.

գ) պահանջվող PRF անընդհատ-ալիքային դոպլերի համար **ոչ պակաս, քան 1400-49700 Հg**, հայտնաբերվող մաքսիմալ արագությունն՝ **առնվազն 42 մ/վրկ**, հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ **ոչ ավելի քան 3,5 սմ/վրկ**: Մասնակցի կողմից որակավորմանը չներկայացրած, հետագայում հղում արված տվյալներում ստորին սահմանը՝ **1800 Հg է, պահանջված 1400 Հg-ի փոխարեն**: Պահանջի հիմնավորում՝ սահմանափակում է ուլտրաձայնային ալիքների մշակումն ավելի խորը հատվածներից տվյալ ռեժիմում.

դ) պահանջվող PRF-իմպուլս-ալիքային դոպլերի համար **ոչ պակաս, քան 300-49700 Հց**, հայտնաբերվող մաքսիմալ արագությունն՝ **առնվազն 35 սմ/վրկ.**, հայտնաբերվող մինիմալ արագությունը՝ **ոչ ավել, քան 0,05 սմ/վրկ**: Մասնակցի կողմից որակավորմանը չներկայացրած, հետագայում հղում արված տվյալներում **1000-22500 Հց** է: Պահանջի հիմնավորում՝ դոպլերս սկանավորման ընթացքում սահմանափակում է ավելի բարձր և ցածր հոսքերի ճիշտ գրաֆիկական պատկերումը, կարող է առաջացնել բարդություններ դոպլերս հետազոտող մասնագետի համար: Հայտնաբերվող **մաքսիմալ և մինիմալ արագությունները նշված չեն**.

ե) պահանջվող PRF գունավոր դոպլերի համար դոպլեր սպեկտրի ավտոմատ ուրվագծում՝ **առնվազն 500-27000 Հց**, մաքսիմալ արագությունը՝ **ոչ պակաս, քան 380 սմ/վրկ.**, մինիմալ արագությունը՝ **ոչ ավել, քան 0,05 սմ/վրկ**: Մասնակցի կողմից որակավորմանը չներկայացրած, հետագայում հղում արված տվյալներում **1000-19500 Հց** է: Պահանջի հիմնավորում՝ գունավոր դոպլեր ռեժիմում մակերեսային և խորանիստ շերտերում կդիտվի էականորեն վատ անոթների գունավորման պատկեր: Հայտնաբերվող **մաքսիմալ և մինիմալ արագությունները նշված չեն**:

զ) պահանջվող անոթների հունի պատկերավորման ռեժիմ բարձր տարածական/ժամանակային հնարավորությամբ-կատարելագործված դինամիկ հոսք: Մասնակցի հնարավոր համապատասխան ռեժիմն է S-Flow.

է) պահանջ մազանոթների հունի պատկերավորման ռեժիմի հնարավորության՝ բարձր տարածական/ժամանակային լուծմամբ և կադրերի բարձր հաճախականությամբ, մազանոթների հունի պոլիխրոմ ներկում: Մասնակցի ավելացրած տվյալներում հղում է արված էներգետիկ դոպլերի առկայության, ինչն առանց այդ էլ նշված էր պահանջի մեջ: Պահանջի հիմնավորում՝ անհնար է ստանալ մազանոթների իստակ պատկերավորում տվյալ ռեժիմով, ինչի համար առանձին պահանջվում է հատուկ մազանոթային պատկերավորման ռեժիմ, որը բացակայում է մասնակցի մոտ: Շատ կարևոր է մալֆորմացիաների և նեոպլազիաների արյունահոսքի գնահատման համար:

ը) պահանջվող կոնվեքսային տվիչի հաճախականությունների դիապազոն **առնվազն 1.2-6.0 ՄՀց**, մազանոթային հունի պատկերավորում բարձր տարածական/ժամանակային հնարավորությամբ: Մասնակցից առաջարկել է **2.0-8.0 ՄՀց**: Պահանջի հիմնավորում՝

մասնագետին թույլ չի տա հետազոտելու ավելի խորը շերտերն ու դժվարություններ կառաջացնի խոշոր կառուցվածքով պացիենտների սկանավորման ընթացքում՝ հաշվի առնելով սարքավորման բազմակողմանի ցածր ցուցանիշները խորանիստ սկանավորման պատկերավորման մեջ:

թ) պահանջվող կոնվեքսային տվիչի դիտարկման անկյունն՝ **առնվազն 70**, շառավիղը **ոչ պակաս քան 52 մմ**: Մասնակցի ավելացրած տվյալներում հղում է արված դիտարկման անկյունը՝ **58**, շառավիղը՝ **60 մմ**, ինչը չի համապատասխանում պահանջին: Պահանջի հիմնավորում՝ տալիս է ավելի փոքր դիտարկման պատկեր, իսկ մեծ շառավիղը դժվարություններ կառաջացնի տվիչի՝ պացիենտի մարմնին դիրքորոշման ժամանակ:

Ընկերությունը Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է ըստ կոնկրետ սարքավորման, մոդելի, ծագման երկրի և արտատպված է եղել կոնկրետ սարքի տեխնիկական փաստաթղթերից, մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով քննարկվող 2-րդ չափաբաժնի մասով նախատեսված հատկանիշները սահմանվել են ըստ համապատասխան միջակայքերի (առնվազն, ոչ պակաս, քան): Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: Ընդ որում նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող

նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ չափաբաժինը, Խորհուրդը գտնում է, որ այն համապատասխանում է Օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին և չի հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Ասպիսով Խորհուրդն արձանագրում է, որ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՀՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի համար ներկայացված «թվային ուլտրաձայնային համակարգ երկու տվիչով» ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից վերը արձանագրված հատկանիշների մասով, մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 4.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 2, 3 **չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:**

Խորհուրդը գտնում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 4.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի տեսանկյունից հանդիսանում է կեղծ տվյալի ներկայացում:

* Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

• նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

• խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Յուցակում ներառելու միայն մեկ հիմքը, այն է՝ **Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը**, քանի որ սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ չկա որևէ տեղեկատվություն «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 03.05.2017թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ:

Ընկերությանը Յուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ **խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի** ի հայտ գալու պայմաններում:

Խորհուրդն, անդրադառնալով Ընկերության գրավոր այն դիրքորոշմանը, համաձայն որի Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացրել է 03.05.2017թ., երբ «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքն ուժի արդեն ուժի մեջ էր, արձանագրում է, որ «ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարվել է 20.04.2017թ., որի ժամանակ գործում էր «Գնումների մասին» 22.12.2010թ. թիվ ՀՕ-206-Ն օրենքը: Ընդ որում «Գնումների մասին» 25.04.2017թ. ՀՕ-21-Ն օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

Հետևաբար «ՇՀԱՊՁԲ-15/16-ՏԴՊԱԿ-24» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի և դրանից բխող հարաբերությունների վրա տարածվում են նշված ընթացակարգը հայտարարելու օրվա դրությամբ գործող

«Գնումների մասին» 22.12.2010թ. թիվ ՀՕ-206-Ն օրենքի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.08.2017թ. թիվ 03/27-1/14263-17 գրությամբ «Յունիմեդ» հայ-ռուսական ՀՁ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01806887) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ